

դիցապաշտն խոսրով, եւ կը տեսնենք որ սա եւս իւր զոհելի անասունքը կը սքողէ «ոսկեղէն եւ արծաթեղէն զարդուք», այս ինքն այդպիսի հիւսուածներով, որոնք կ'աւարտէին «ի վերջաւորս փողփողեալս»․ նոյնպէս եւ «նշանակապ պալարակապ մետաքսիւքն եւ ոսկովք պսակօք» (Ագթ. 34), որոց վերջինդ հարկաւ կ'անցնէին եղջերաց շուրջ¹։ Եւ թէ այս, թէ վերոյիշեալ միւրգերը կը նշանակէին մայր երկրի բարեբերութիւնը․ ըստ որում մեր հեթանոս նախնիք «պսակս եւ թաւ ոստս ծառոց» կը նուիրէին նաեւ Անահտայ, «որով կեայ, կ'ըսէին, եւ զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց» (նոյն, 49, 61)։ Ասկից է ուրեմն տեառնականի պճնումը, ինչպէս կը համարի եւ Շնորհալին՝ «ըստ հնոյն օրինի» բացատրութեամբ։ Գիտենք որ Հելլէնք ալ կը զարդարէին զոհելի կենդանին պսակներով ու ժապաւինօք, եւ ցուլերու՝ կովերու եղջիւրները կ'ոսկեզօծէին (Դար. Դ, 964)։ Ես ինքս հին Հռով-

1. Այդպէս կ'իմանամ եւս Ագաթանգեղոսի խօսքերդ, զոր Հ. Աւիշան մեհենաց սեպհական զարդերու կը վերագրէ (Հին հաւ. 457)։ Բայց դիտելի է՝ որ պատմիչն յետոյ կը յարէ արդէն տաճարի զարդարանքներն ալ․ եւ «պալարակապ» բառը կը յիշեցնէ մանաւանդ անասնոց յատուկ զարդ մը, ծանօթ «պալարակապ երիվարօք» օրինակին մէջ (Ես. 42, 20)։